600.0239.25.05.07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2007 թվականի №239Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի №55Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի նոյեմբերի 8-ի «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությանը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման լիցենզիաներ տրամադրելու մասին» №143Ա որոշման №1 հավելվածով հաստատված «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի արտադրության (հզորության) №0145 լիցենզիայի պայմանների 6.33 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի մայիսի 17-ի «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության գնումների կարգը հաստատելու մասին» №55Ա որոշմամբ հաստատված կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ VI բաժնով.

«VI. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՅԼ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

24. Գնումների կատարման այլ սկզբունքները և գործընթացը

24.1. Պատվիրատուն, առանձին դեպքերում, ելնելով տվյալ գնումների առանձնահատկություններից, կարող է դիմել հանձնաժողով՝ գնումների կատարման համար այլ սկզբունքների և գործընթացի կիրառման համաձայնություն ստանալու համար:

24.2. Սույն կարգի 24.1 կետում սահմանված դեպքերում պատվիրատուն հանձնաժողով է ներկայացնում այդ գնումների առանձնահատկության հիմնավորումները և դրանց կատարման սկզբունքների ու գործընթացի վերաբերյալ իր առաջարկությունները:

24.3 Հանձնաժողովը, ողջամիտ ժամկետում ուսումնասիրելով պատվիրատուի հիմնավո-րումները և առաջարկությունները, սահմանված կարգով կայացնում է համապա-տասխան որոշում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
25 մայիսի 2007թ.
ժամը 16^{00}